ԱՌԱՋՆՈՐԴԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջնորդել Հիսուսի Նման Մաս 4

«Այդ ժամանակ Հիսուսը Հոգու կողմից անապատ տարվեց՝ սատանայից փորձվելու։» Մատթեոս 4:1

1. Ցավի և հաճույքի փորձը

«Նա քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահելուց հետո քաղց զգաց։ Եվ փորձիչը, նրան մոտենալով, ասաց. «Եթե Աստծու Որդին ես, ասա՛, որ այս քարերը հաց դառնան»։ Նա պատասխանեց ու ասաց. «Գրված է. "Ոչ միայն հացով է մարդն ապրում, այլև այն ամեն խոսքով, որ Աստծու բերանից է ելնում"։» Մատթեոս 4:2-4

Երբ ես դատարկ եմ զգում ինձ, վիրավորված կամ շփոթված եմ, արդյո՞ք կվստահեմ Աստծուն իմ կարիքները բավարարել թե՞ կշտապեմ այդ անել իմ ճանապարհներով

«որովհետև իմ ժողովուրդը երկու չարություն գործեց. ինձ՝ կենաց ջրի աղբյուրին, լքեց. իրենց համար ջրամբարներ փորեցին, կոտրած ջրամբարներ, որոնք չեն կարող ջուրը պահել։» Երեմիա 2:13

«Ձեր մեջ ո՞վ կա, որ վախենում է Տիրոջից, հնազանդվում նրա ծառայի ձայնին, թեև քայլում է խավարի մեջ և լույս չունի. թող նա ապավինի Տիրոջ անվանը և հենվի իր Աստծու վրա։ Ահա դուք բոլորդ, որ կրակ եք վառում...գնացե՛ք ձեր կրակի լույսով և ձեր կրակ տված կայծերի մեջ։» Եսայիա 50:10-11

Հակաթույն – Վստահել Աստծուն

«Ուրեմն մի՛ մտահոգվեք...որովհետև ձեր երկնավոր Հայրը գիտի, որ դուք այդ ամենի կարիքն ունեք։ Դուք նախ Աստծու արքայությունն ու նրա արդարությո՛ւնը փնտրեք, և այդ ամենը ավելիով ձեզ կտրվի։» Մատթ 6:31-33

«Այն ժամանակ սատանան թողեց նրան և ահա հրեշտակներ մոտ եկան և ծառայում էին նրան։» Մատթեոս 4:11

2. Հանրահայտ և գովելի լինելու փորձը

«Այդ ժամանակ սատանան նրան տարավ սուրբ քաղաքը, տաճարի աշտարակի վրա կանգնեցրեց ու նրան ասաց. «Եթե Աստծու Որդին ես, քեզ ցա՛ծ նետիր, որովհետև գրված է. "Իր հրեշտակներին քեզ համար պիտի պատվիրի, և նրանք քեզ ձեռքերի վրա պիտի բարձրացնեն, որ երբեք ոտքդ քարին չխփես" Հիսուսը նրան ասաց. «Դարձյալ գրված է. "Տիրոջը՝ քո Աստծուն, չփորձես"։» Մատթեոս 4:5-7

Ես պիտի գործածեմ իմ կարողությունները ծառայելու համար Աստծուն և մարդկանց թե՞ աչքի ընկնելու ու հավանության արժանանալու համար

«Երբ Ռոբովամի թագավորությունը հաստատվեց, և ինքը հզորացավ, այն ժամանակ թողեց Տիրոջ օրենքը, իր հետ նաև՝ ամբողջ Իսրայելը։» Բ Մնաց 12:1

«...մարդը փորձվում է իրեն գովաբանող բերանով։» Առակներ 27:21

Հակաթույն – Լսել Աստծուն և Խոնարհվել

«Եթե Հոգով ենք ապրում, Հոգով էլ վարվենք։ Մնապարծ չլինենք՝ միմյանց գրգռելով ու միմյանց նախանձելով։» Գաղատացիներին 5:25-26

«Աստծու հզոր ձեռքի տակ խոնարհվե՛ք, որպեսզի ձեզ ժամանակին բարձրացնի։» Ա Պետրոս 5:6

3. Բարգավաճման և ունեցվածքի փորձը

«Սատանան Հիսուսին ասաց. «Այս ամենը քեզ կտամ, եթե առջևս ընկնելով երկրպագես ինձ»։ Այդ ժամանակ Հիսուսը նրան ասաց. «Հեռո՛ւ գնա, սատանա՛, որովհետև գրված է. "Տիրոջը՝ քո Աստծուն, կերկրպագես ու միայն նրան կպաշտես"։» Մատթեոս 4:8-10

Ինձ համար ավելի արժեքավոր է հարստությունը աշխարհի վրա թե՞ հավիտենական վարձատրությանը երկնքում

«Մարդուն ի՞նչ օգուտ, եթե ամբողջ աշխարհը շահի, բայց իր կյանքը կորցնի, կամ մարդն ի՞նչ փրկագին կտա.» Մատթեոս 16:26

Հակաթույն – Առատաձեռնություն

«Թող բարիք գործեն, բարի գործերով հարստանան, առատաձեռն լինեն և ուրիշին բաժին հանեն իրենց ունեցածից։ Իրենք իրենց համար գանձ հավաքելով՝ լավ հիմք կունենան հանդերձյալի համար, որպեսզի ճշմարիտ կյանք ձեռք բերեն։» Ա Տիմոթեոսին 6:18-19

«Եվ երբ սատանան ամեն փորձություն կատարեց, նրանից միառժամանակ հեռացավ։» Ղուկաս 4:13

Ամեն անգամ երբ հաջողում ես փորձը մի նոր զորություն ես ստանում

«Եվ Հիսուսը Հոգու զորությամբ վերադարձավ Գալիլեա, ու...ելավ ընթերցելու։ Եվ երբ գիրքը բացեց, գտավ այն տեղը, որտեղ գրված էր. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, որովհետև ի՛նձ օծեց և ի՛նձ ուղարկեց աղքատներին բարի լուրը ավետելու, սրտով բեկյալներին բժշկելու, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն, հարստահարվածներին ազատ արձակելու, Տիրոջն ընդունելի տարին քարոզելու։» Ղուկաս 4:14-19